

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
ОБЛАСТЬ ЛОРИ
МЭРИЯ Г. ТАШИР
МЭՐ

ք. Տաշիր, քաղաքային հրապարակ
հեռ. 2-22-41,2-25-77

г. Ташир, городская площадь

тел.2-22-41,2-25-77

N 997 -19

24 հունիս 2019թ.

ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ուղարկում ենք ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի NN 533-Ա-537-Ա որոշումները:

Առդիր՝ 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-533-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

17 հունիս 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 400-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 8-ի
«Հայաստանի Հանրապետության Տաշիր համայնքի վարչական սահմաններում գտն
վող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» թիվ 400-Ա
որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 1 կետի «Ժուլվեր Մեսրոպի և
Անահիտ Ալեքսանի Բաղդասարյաններին» բնառերը փոխարինել «Գևորգ Արմենակի
Բժոյանին» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. հունիս 17
ք. Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՒԻ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-534-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

17 հունիս 2019թ.

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ դեկտեմբերի 29-ի < N2387 Ն որոշման 29-րդ կետի դ) ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Արսեն Վանիկի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը /վկայական՝ 2158064, տրված՝ 24.08.2006թ/ Լոռու մարզ, ք. Տաշիր, Կիրովի փողոց, տուն 144 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 4 -րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 144 բնակելի տուն հասցեն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. հունիսի 17
ք. Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒԻԻ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-535-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

18 հունիս 2019թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ դեկտեմբերի 29-ի N2387 Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) կենթակետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող, Նարինե Լյովայի, Լարիսա Վոլոդյայի Լյովա Արտաշի, Սյուզան Լյովայի Սուքիասյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին՝ Լոռու մարզ ք. Տաշիր Կիրովի փողոց մաս թիվ 14, բնակարան թիվ 22 հասցեի փոխարեն տրամադրել՝ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 5-րդ թաղամաս, Երևանյան փողոց, 14 բ/2 թիվ 22 բնակարան փոստային հասցեն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. հունիսի 18
ք. Տաշիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-536

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

19 հունիս 2019թ.

ՏԱՇԻՐ (ԿԱԼԻՆԻՆՈ) ՔԱՂԱՔԻ ԿՐՈՒՊՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴՈՆԱՐԱ ԼՅՈՎԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿԱՐԵՆ ԿԱՌԼԵՆԻ ԵՎ ԱՐՄԵՆ ԿԱՌԼԵՆԻ ՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ԹԻՎ-521-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Կարեն Կառլենի Նազարյանի /անձ. AP0530508, տրված 09.09.2016թ./ դիմումը, 1986թ. ապրիլի 2-ին կազմված տեխնիկական պասպորտը, «Արտյոն Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, 2008թ. դեկտեմբերի 22-ին հաստատված ժառանգական գործ թիվ 113 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N2387Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ. ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, նկատի ունենալով, որ տան կառուցապատման և սպասարկման համար օրենքով հատկացված 0,07հա և կից 0,05936 հա հողամասերը և դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված ինժինեռատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Տնատիրության զբաղեցրած սպասարկման համար անհրաժեշտ ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում 0,12936 հա: Հաշվի առնելով այն, որ շինությունները կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15- (1990թ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրենքի ուժով ճանաչել Դոնարա Լյովայի Կարապետյանի, Կարեն Կառլենի և Արմեն Կառլենի Նազարյանների բաժնային սեփականության իրավունքը Լոռու մարզի Տաշիր քաղաքի Կրուպսկայա փողոցի, թիվ 18ա /կադաստրային ծածկագիր՝ 06-008-0272-0003/ հասցեում գտնվող 0,12936հա հողամասի նկատմամբ, որից ըստ փաստաթղթերի 0,07հա հողամասի մինչև 20 տոկոսը գերազանցող հողամասը կազմում է 0,084հա:
2. Ըստ չափագրման արդյունքների հողամասի 20 տոկոսը գերազանցող 0,04536հա հողամասը ուղղակի վաճառքով տվյալ պահին գործող հողամասի կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով ընդամենը 30210 դրամով օտարել Դոնարա Լյովայի Կարապետյանին, Կարեն Կառլենի և Արմեն Կառլենի Նազարյաններին:
3. Դոնարա Լյովայի Կարապետյանի, Կարեն Կառլենի և Արմեն Կառլենի Նազարյանների հետ կնքել հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:
4. Հողամասի չափերը որոշվում են Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Ճանաչել Դոնարա Լյովայի Կարապետյանի, Կարեն Կառլենի և Արմեն Կառլենի Նազարյանների բաժնային սեփականության իրավունքը Լոռու մարզի Տաշիր քաղաքի Կրուպսկայա փողոցի, թիվ 18ա /կադաստրային ծածկագիր՝ 06-008-0272-0003/ հասցեում գտնվող 0,12936հա մակերեսով հողամասի վրա գտնվող բոլոր շենք շինությունների նկատմամբ համաձայն ներկայացվող շենք-շինությունների բնութագրի:
6. Տնատիրությանը ք. Տաշիր /Կալինինո/ Կրուպսկայա փողոց թիվ 18ա հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք քաղաք Տաշիր 13-րդ թաղամաս Բաղրամյան փողոց, թիվ 18/1 բնակելի տուն:
7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթա են գրանցմանը ՀՀ ԱԳԿ կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:
8. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2019թ. հունիսի 10-ի «Տաշիր (Կալինինո) քաղաքի Կրուպսկայա փողոցի թիվ 18ա հասցեի բնակելի տան և հողամասի նկատմամբ Կարեն Կառլենի և Արմեն Կառլենի Նազարյանների ընդհանուր սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ- 521-Ա որոշումը:
9. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2019թ. հունիսի 19
ք. Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒԻԻ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-537-Ա**

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41
21 հունիս 2019թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Պետրոս Գասպարի, Հայաստան Սերոբի, Մարտիրոս Պետրոսի, Քնարիկ Մարտիրոսի Աբրահամյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական N 2176570, տրված 15.09.2006թ.-ին) հրաժարվելու մասին դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիներ Պետրոս Գասպարի, Հայաստան Սերոբի, Մարտիրոս Պետրոսի, Քնարիկ Մարտիրոսի Աբրահամյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.
 - 1.1 06-008-0355-0032 կադաստրային ծածկագրով 0,124 հա վարելահող:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Տաշիր սպասարկման գրասենյակ:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականները ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ